

## ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ \*

Իսկ զանգահան ի ստորոտան, զպայծառ քարոզութեան ծաւարումն կոչէ. <sup>141</sup> և յուան բառնայ զքառանիւթեայ վահանն՝ յորում ոսկին սուրբ, աստուածութեանն ընդ շորից բնութիւնս միանայ, և Հոգւոյն սրբոյ շնորհաւքն զխաչակցեալան ընդ Քրիստոսի ի վեր տանել ի հայրական փառացն խորանս, որպէս մուրեակ ոչխարն Քրիստոսիւ ցուցանէ մեզ յինքեան բարձեակ զբոլոր զմեր բնութիւնս. քառանիւթեայ կապուտակովն՝ երկնաւորացն ցուցանէ զմեզ առաքինեակ. իսկ ծիրանեաւն՝ թաղաւորապէս զգեատաւորիլ զինքեան թաղաւորութիւն. կարմրով մանուածեակ՝ հաւատով զմեզ իւրով մարմնով և արեամբն ընդ անքնննելի աստուածու<sup>15</sup> թեամբն հաւատարմացուցանել. և նիւթեակ բեհեզս որ ի կուսէն է մանեակ: Չայսորիկ զտեակ քահանայապետին մերոյ յանապատի մարդկութեանս ի յուս իւր յետոյր, շորեքկարդեան աւետարանաւն մտանել յանձեռագործ խորան սրբութեան աղանաւոր վահասուն, որ աւրինակ էր երկոտասան առաքելոցն, եկեակ ի տաճարն սուրբ ի մեծն Սիոն տէր մեր Յիսուս Քրիստոս, յաղազս արմատաջինջ

20 առնելոյ առնոյր զճշմարտութիւնն և զյանդիմանութեան նշանն յաղթութեան, որ կոչի ըստ մեր լեզուիս Կնիք, որ է Ամփիւսն, զոր ունի քահանայապետն ի ձեռին իւրում. այլ բերցուք մերձ յաւանդութիւնս, զոր ընկալայք ի սուրբ<sup>142</sup> առաքելոցն, և շնորհաւքն Քրիստոսի

25 զիցուք առաջի զմիարդակ լուծն ի միասին ժողովելն մեր, որք ցրուեալքն էաք յաւտարէն, իսկ ի ձեռն երկնաւոր հովուապետին միացեալք եղաք ընդ Աստուծոյ

\* ) Տես «Արարատ» Եւանիս, ժամակարգութեան Մեկնութիւնս

7 Ա. քրիստոսի.

13 Ա. շունի՝ որ.

15 Ա. յանարատ ի մարդկութեանս.

22 Ա. որ ամփիւսն ունի.

25 Ա. միարձակ, ընտ օտար ձեռքով.

որդեզրապէս. և հանդերձեալ գքահանայիս զկնքիւ սրբոյ  
մկրտութեամբն՝ զմեռանելն ընդ Քրիստոսի խաչակցու-  
թեամբն աստուածագգեսա եղանել նշանակէ, և մտեալ  
ի սրբութեան յարկան երգաւք հոգևորաւք: Իսկ եւոն՝  
5 խառնել ընդ գոհան,<sup>15</sup> ի «Տէր թագաւորնացն» բերեմք,  
որպէս զվայելչութիւն գգեցաք ընդ մերումն թագաւորի,  
որ ի կուսէն էառ զմեծ վայելչութիւն, որով գգեցեալք,  
աւժեալք և թագաւորեալք ընդ Քրիստոսի. ուստի և  
հրեշտակագունդ խառնուածաւք գնդիւ երգս ասեալ,  
10 տուն առ տուն գգեղեցիկ հակառակութիւն ընդ վերինսն  
գոչելով. յետ որոյ նաշի՛ն մաքուր, զանապականութիւնն  
Քրիստոսի նշանակէ հանդերձ Սրբասացութեամբքն ե-  
րեքկին, որ խաչեցան վասն մեր պատարագ Հաւր ըն-  
դունելի. ընդ որս և մեք մատչիմք պատարագ բանաւոր  
15 Հաւրն երկնաւորի:

Աստանաւր բերկրի խորհուրդ և քննել աւանդու-  
թիւնս յոքունց ծածկեալ. ի համբարձումն Աւետարանին,  
յորոյ զաստուածորդին<sup>14</sup>2<sup>բ</sup> տեսանեմք հոգւոյն աշաւք  
20 նստեալ ի վերայ աթոռոյ բարձու և վերացելոյ. ի բուրել  
խնկոցն անուշահոտ՝ վարդապետութեանն առ ծնեալ  
աւագանին եկեղեցւոյ մանկանց և փառաւորութեանց.  
և բարբառ հրամանին՝ բարոգութիւն պաշտամանն. և  
բարբառ հրամանին հիացական՝ հաստատուն կալ ի վեր  
25 նաշելով յուղղութիւն, որ կոչեացն<sup>14</sup> երեքկին խորհր-  
դով ի մի յոյս կենդանի. աստ և Հոգւոյն սրբոյ փարումն:

1 Ա զկնքիւ Սերեւս՝ զկոնքիւ.

4 Բ երգով.

5 Սաղ. ՂԲ 1.

16 Տես Յոհ. Իմ. 105, «Աստանօր հրաշագանս վերաբերի  
խորհուրդս և աւանդութիւնս յոքունց ծածկեալս: Իսկ համբար-  
ձումն սրբոյ աւետարանին, յորոյ վերայ զաստուածորդին հոգւոյ  
տեամբ տեսանեմք նստեալ, իբրու ի վերայ աթոռոյ բարձու և  
վերացելոյ ըստ Ասայեայ տեսութեանն»:

24 Ա հրացական, Բ հրացական. օտար ձեռքով է՝ ի փոխած.

25 Ա ուղղութիւն, Բ յուղղութիւն. էլ՝ օտար ձեռքով.

26 Տ. Յով. Իմ. 105. «Աստանօր փարումն Հոգւոյն սրբոյ» ևլն.

ինդրոյն աւրինակով եկեալ ի Հաւրէ, գամենեւեամբ ի վեր  
 անդով ուստի անկաքն: Այսու ինկաւք նամանիմք Աս-  
 տուծոյ ըստ պատկերին եղեալ սակա. և համարձակու-  
 թեամբ շուրջ պարուրեալ զարքունական սեղանովն,  
 5 բուրեալ զանուշահոտ խոստովանութիւնն ընդ սերովքէն  
 վասն մեր խաչեցելոյն անամհի: Սիրով աստուածային  
 կայծակամբք հրացեալք ելեել ասնեն ճշմարիտ վարդա-  
 պետութեամբքն քարոզել զՔանն կենաց, զխաղաղու-  
 թիւն ամենայն աշխարհի և եկեղեցւոյ սրբոյ. ըստ որում  
 10 և առաջինն ելանել նկարագրութեամբք Հաւրն երկնաւորի,  
 զլինելն տուփք անուշահոտ քրիստոսաբերք և թաղաւո-  
 րականք ըստ սրբոյ կուսին Մարիամայ երգել արհնու-  
 թիւն Աստուծոյ և աղաւթք յերուսաղէմ. Այսմ ինկոց  
 նաման<sup>15</sup> եալ երանելին Նսայիաս, անդուստ ի վերուստ  
 15 ազգարարական բարբառովն գոչէ, «Ընտ գոյ աստուած յա-  
 շտենակամ ի կուտ. յաղաղս փրկելոյ զաշխարհս». յայս ի-  
 մասս հայեցեալ եկեղեցւոյ սրբոյ. ընթեանու զմարգարէն  
 Նսայի՝ ընդունելով զանուշահոտութիւն Հոգւոյն սրբոյ-  
 գնոյն և յայլս ծանուցեալ<sup>16</sup> լինել անուշահոտութիւն ի  
 20 Քրիստոս, որպէս լուսաւորք ի մէջ կամակոր ապտամբ  
 ազգին, և եղեալ «ազդ սուրբ եւ անուն կոչեցեալ նոր»,  
 այսինքն քրիստոնեայք, լցեալ պտղովք ուրախարար գին-  
 ւովն, գոչեն երգս Մկսեղի անուանելով, այսինքն թէ,  
 Աւրհնութիւնս մեր երգի հոգևորապէս, այլ որպէս երկ-  
 25 նից ընկալեալ եկեղեցւոյ կատարէ. յետոյ զԱռաքելականն  
 ընթեանով վարդապետութիւն, կերակրի իբրև յերկնուստ  
 իջելոյ հացիւն կենդանարար կատարելապէս գիտել զխոր-  
 հուրդս աստուածպաշտութեան, որով զբարձրագոյնն  
 մատուցանել ի սրբութեանն յընծայարեութիւն հաւաստ  
 30 ի Քրիստոս: Այս աստիճան երգեցելոց յեկեղեցւոջ զբո-  
 լորն զրդէ յեկեղեցւոյ լսողաց զունկնդրութիւն Ալէլուիան  
 ձայնիւ. որպէս Յովաննէս զքրիստոսեանն աւետեաց

15 Նսայ. ԿԲ 11.

22 Նսայ ԿԲ 2.

22 Բ նոր խորայել. «խորայել» օտար ձեռքով.

երանելով անարկու հիացուցանող, որ զխորինան պա-  
 հանջէ, ուղղ<sup>145</sup>ակի ունկնդրութիւն պատրաստագոյնա  
 հանդիպել և անշարժ դիտել ընդ արեւարս. վասն զի ոչ  
 պատգամաւոր որ բարբառի աւետարանական, կամ հրեշ-  
 5 տակ որ, այլ յնքնին երկնի և երկրի Տէրն՝ տեսելով,  
 «Ելի ի հարէ եւ ելի յաշխարհ» և որ ի կարգին է, և ապա  
 յեա<sup>15</sup> անխորիկ սաւառնումն անշքշունջ: Այլ և ի գլոր-  
 մանէ, բանսարկուին իւրովքն հնազանդելովք հիացումն  
 կալաւ զերկնաւոր գաւրան, որոց նշան գաւրութեան  
 10 սոււաւ նմանս իմն բարբառով անկասկածապէսս կալ ի  
 հաստատութեան փառանս եւ այս է բան մարդացելովն,  
 որպէս ի ձեռն գգեատու ի վերայ ուսոցն շուշփայտական  
 հանդերձիւքն բերելով յինքեան խաւսող ըստ սատուած-  
 ընկալն Պաւղոսի, զոր պարտ էր երկնից ընդունել. և  
 15 որպէս ճշմարիտ անմեղութեամբ բարձրաձայն բարբա-  
 րով խոստովանի զսուրբ հաւասան, որ յերանելի հարցն  
 տուան սրբոյ եկեղեցւոյ, որ ի նիկիական ժողովոյն հա-  
 ճոյացաւ ի Հոգւոյն սրբոյ, որք և զոհք ընտիրք հոս ա-  
 նուշից Քրիստոսի եղեալք յեկեղեցւոյ. յեա Հաւատարմն  
 20 տեսելոյ, քարոզէ առաջի բազում վկայից ոչ ըստ երկնի  
 այս քարոզ եկեալ նոխար պաշտման ի յերկատասաներ-  
 րորդ աշտիճան յեկեղեցւոյ ի յերրորդէն,<sup>146</sup> զոր ի քա-  
 հանայական աղաւթիցն, որ գամենայն հանդէս առաջի  
 հայրական դիժոցն առաւելապէս շարժել զոգորմութիւնս  
 25 Աստանաւր յանդի յոլովակի յաղագս որոյ այսպիսի եղեալ  
 քահանայապետ<sup>15</sup> միածին Բանն սատուած, յինքն կրե-  
 լով զխորհուրդ պատարագացն զոհից, առ Հայր մատու-  
 ցանելով զմեր աղաւթս հնոյ կտակին բանին գատուերնս  
 Իսկ մեզ արդեամբք զճշմարտութիւնն զխաչն, և որ ի  
 30 նմա կախեալ ըստ արբանամեան խորհրդեան:

Անդ խոյ զժառոյն սերեկեայ՝ միայն ապրեցուցանէ  
 զՔաճակ, առա Բանն սատուած մարմնով և արեամբ

4 Բ Աւետարանական. «աւն» օտար ձեռքով.  
 6 Յոհ. ԺԶ 28.  
 30 Ա. խորհրդինան.

գամենայն տիեզերս փրկեալ: Անդ մահ ի վերայ լան-  
 ջացն Ահարովնի կայր, նշխարն շարութեան, աւձին  
 պատրուակեալ. իսկ Քրիստոսիւ վերացի շարին պատ-  
 րանքն. և քահանայապետութեամբն ի մի հաւարեալ  
 5 զհինն և զնոր քահանայութիւնս, զորս միմեանց համ-  
 բերեմք զխորհուրդ զգետաւորեալ քահանային: Անդ  
 զպճղնաւորն աւրինակաւ. աստ զՔրիստոս սփածեալ  
 խորհրդածու: Անդ վաղաս ականաշար յուս քահանային.  
 աստ նափորան սրբութեան. սրբութեան խաչագղեատիկ  
 10 ժողովրդեամբն քրիստոսի: Անդ յանդիմանութիւնն և  
 ճշմարտութիւն՝ մեղք ժողովրդեանն,<sup>15</sup> և արդարութիւն  
 ի տախտակին. աստ մաքրութեան ցուպ ի ձեռինն սփիռն  
 յիշատակ շարշարանացն: Անդ ի ծոպս<sup>16</sup> ձորձոցն և ի  
 դրասանս ունէին զյիշատակ ելիցն՝ զաւրինակ խաչին,  
 15 որպէս և դրեալէ, «նշանս մեր է. եւ մեր ինչ ոչ տե-  
 սոր»<sup>17</sup>. իսկ աստ ի սրտի և ի հոգւոյ զլիսովիմբ, զորով  
 փարեալ և ի նոյն միացեալ քրիստոսեան քահանայա-  
 պետիդ ի ձեռն գաստուածեան նշանն յաղթութեան,  
 յորժամ մտանիցէ սրբութիւն սրբութեանցն պատարա-  
 20 զել զՔրիստոս յիշատակովն շարշարանացն և զմանն  
 քանալոյն: Արդ ցուցանէ եթէ, յորժամ քահանայապե-  
 տիդ առեալ ի ձեռն զնշան յաղթութեան Քրիստոսի,  
 զփրկականն կատարէ զխորհուրդ. վասն զի Ահարովն վեր  
 ի վերոյ ունէր զնշան կենաց և մահու՝ մտեալ ի սրբու-  
 25 թիւնն. իսկ աստուածորդին եղեալ ճշմարիտ քահանայ  
 խոտաովանութեանս մերոյ, և մատուցեալ ինքն պատար-  
 արդ յաղագս աշխարհի կենաց:

Անդ մանանայն և ազրիւրն ի վիմէն. աստ մարմին  
 և արիւն տեառն մեր Յիսուսի Քրիստոսի: Այս գէմք և  
 30 միտք են զգետաւ քահանային, և որ ի ձեռին ունի

9 Ա. խաչն սգեատիկ.

11 Բ ճշմարտութիւնն, վերջին «ն» օտար ձեռքով.

13 Բ ի ծուփս.

15 Սաղ. 27 9.

17 Ա զփարեալս նոյն.

հայրապետն արհիան գիտաչն. իսկ ի յեօին աւուրն մեծի  
 և ամպախաղաց գալատեան Միաժնին աստուծոյ, յեր-  
 րորդ մասու նորին աւրինակաւ աստուածական խորա-  
 նաւն և փառաց ճառ<sup>145</sup> ա<sup>146</sup> գայթիւք նստեալ ի քերով-  
 5 քէական արժոռոյ, ըստ այսմ խորանի գալ քահանայա-  
 պետին: Աստանաւք յառաջ մատուցեալ մարդարէականքն  
 և արարելականքն ի վկայ ճշմարիտ և անսուտ աստուա-  
 ծութեանն:

Աստ Ալէլուիք. համբարձումն սուրբ Աւետարանին և  
 10 ընթեանուին, և Հաւատամն մեծաձայն. իսկ անդ համ-  
 բանալ ձեռացն գրասուց հրեշտակաց դուստափայլ  
 արժոռովն Տեառն հանդերձ սրբասացութեամբքն, և նստել  
 անաչառ դատաւորութեանն, հաւատա և գործս պահան-  
 ջել ի բազորիցս աղամայժնելոց, զոր հատուցէ ըստ  
 15 իւրաքանչիւր փաստակոցն մեր: Աստ մտանել քահանա-  
 յապետին ի սրբութիւնան ճշմարիտ պատարագին Քրիս-  
 տոսի, յաղագս ամենայն արեղերաց քաւութեան մեղաց-  
 անդ գարժանացեալս և զսիրեցեալս անուան իւրոյ  
 Քրիստոսի անուլ, և հաւատ կամացն զոհացողական  
 20 ընծայս մատուցանել, պսակաւորս աննել և մտանել  
 յանձառ բարութիւնան, որ զուխս փափկութեան վայել-  
 չացուցանէ ըմպել, ուր հնչումն տաւնողացն և ձայն  
 ցնծութեան և աստուածութեան պայծառ ի Քրիստոս  
 Յիսուս ի Տէր մեր, որում փառք յախտեանս ամմէն:

Սահակ վարդապետ

(Նարանտաւելի)



1 ի՛ գիտաչն. իսկ ի յեօին. եզ՝ «ի յեօին» օտար ձեռքով.  
 Ա ի հին. փխ. ի յեօին.  
 5 Ա այսմն.  
 6 ի՛ անտանաւք.  
 19 ի՛ և զհաւատ. եզ՝ օտար ձեռքով.